

ւորութիւն ունի մասնակցելու, մնում են միայն Միջազգեաքի տարագիրները, մնացած հայերն էլ հնարաւորութիւն ունին մասնակցելու ազատօրէն:

Ռւստի մեր կարծիքով ընդհանուր եկեղեցական-ազգային ժողովի գումարումը և անհրաժեշտ է և հնարաւոր մօտիկ ապագայում:

Մինչև ժողովի գումարումը թէ անհատապէս, թէ խըմբովին, ժողովներով, յանձնաժողովներով պէտք է նախապատրաստութիւններ տեսնել, նիւթեր հաւաքել, հարցերը մշտել և լրջօրէն պատրաստուելու ընդհանուր ժողովի համար:

Քառոր մեծանում է, դրա զէմն առնողը Եկեղեցական ազգային ժողովը սկիախ լինի:

Գիւտ վարդ.

ԱՊՕՐԻՆԻ ԲՈՒԱԴՐԱԽՈՒՄՆԵՐ.

Թուսական մեծ յեղափոխութեան բերած անակնկալ բարիքների հետ առաջ եկան և մի շարք խիստ ցաւալի ու միանգամայն զատապարտելի մտքերի շփոթութիւն, Եւ եթէ այդ մտքերը մի երկու ամիս առաջ լոկ իրը խօսքեր էին երեան գալիս, այժմ տեսնում ենք, որ այդ յոռի մըտքերից մի քանիսը իրականանում են ի վես ժողովրդի, ի կործանումն այն ազատութեան, որին այնքան երկար ակնկալել ենք, որի համար այնքան ազնիւ հողիներ իրենց անձն են զոհեր:

Դարեր շարունակ եկեղեցու համար իր ինչքն ու կեանքը շխնայող ժողովուրդը, , մի քանի տարի առաջ դեռ այդ եկեղեցու գոյքի բռնագրաւման դէմ իր սլաշտանութիւնը առաջ բերող, իր կեանքը դնող ժողովուրդը այսօր շնորհիւ խակ, անպատրաստ, սօցիալիզմի անունից ճառող, բայց սօցիալիզմի վարդապետութիւնը ընաւ չհասկացող մի քանի ճառախօնների շնորհիւ մի տեսակ կարծես անտարբեր, թշնամական դիրք է բռնել դէպի եկեղեցին, կարծես այդ այն եկեղեցին չէ, որին նա դարեր

շարունակ դիմել է, որին ինքն է պաշտպանել իր արեան զնով։ Անգամ հարեան աղջի, վրացու օրինակը այդ դէպ-քում մեր $100^{\circ}/_0$ -ի սոցիալիստներին օրինակ չի ծառայում. չէ՞ որ հայ բրօշիւրով ու թուցիկով սոցիալիստ» դարձածը տասնեակ տարիներ արին քրտինք թափող Եւ-րոպական սոցիալիստին պիտի զարմացնէ իր սոցիալիս-տական» տղիտութեամբ։ Խեղճ սոցիալիզմ, որ քո հետևորդները դրանք են լինում ու քո անունդ վարկարե-կում։ Ինչ և է,

Խորապէս համոզուած եմ, որ այս զինովցած դրու-թիւնն էլ կանցնի, բայց ցաւալին այն է, որ մինչև այդ շատ արժէքներ կկորցնենք, որոնց ձեռք բերելը տասնեակ ու աւելի տարիների աշխատանք կալահանջէ։

Մեր բրօշիւրի սոցիալիստներ»-ը լսել են, որ հողերի համայնացման, վանքերի հողերի ժողովրդականացման հարց կայ աշխարհում և ահա իրենք էլ յետ շմալու համար բոյլշեիկեան քաղաքականութեան են հետեւմ։ հէնց հայ եկեղեցու կենդրոն Մայր Աթոռից։

Յուլիս ամսուայ ընթացքում Վաղարշապատի մի քանի անձինք բարեհաճում են վանքի Մատենադարանի առաջ եղած պարտէզի բարէ պատը դիշերը քանդել, զուռ բանալ ու գրաւել, եթէ դա ժողովրդինն է, եթէ իրաւունքը Վա-ղարշապատցիներինն է, ել ինչու զաղտուկ դիշերով գործ կատարել. սոցիալիստի անուանը ոչ միայն այդպիսի գործը, այլ հէնց այդ գործելակերպը անվայել է։ Եթէ իրաւունքը քանդողներինն է, ապա օրը ցերեկով, իշխանութեան օժան-դակութեամբ կարելի էր ստանալ։ Ես չեմ հաւատում, որ Վաղարշապատցիք բոլորը համամիտ են այդ գործին ու գործելակերպին։ Բայց որ նրանք ցայսօր չեն բողոքել այդ արարքի դէմ, այդ էլ զատապարտելի է։

Փառք Աստուծոյ այժմ ամեն ինչ հրապարակի վրայ է դրւում. կարող էին դնալ Վանական Կառավարութիւն, Սի-նոր, միարանական ժողով իրենց պահանջը դնել ու իրա-կանացնել. եթէ այդ արդարացի էր։ Զէ՞ որ եթէ նոյնիսկ օրը ցերեկով նրանք այդ գործը անողները դային սկատը

քանզէին, միաբանութիւնը բռնի ոյժի չէր դիմի և նրանց իրենց ձեռվ չէր պատասխանի։ Միաբանութիւնը, վանքը եղել է ու կլինի միայն բարոյական, խօսքի, համոզելու միջոցների կողմնակից և ոչ բռնի միջոցների։ Վերջին միջոցի դէմ նա միշտ է պայքարել ու կպայքարի։ բռնի միջոցները քրիստոնէական ոգուն դէմ է և ամեն մի խելահաս մտաւորի համար նման դէպքերում անընդունելի։

Երբ վանքը պատշաճ իշխանութիւններին դիմումներ է անում, միջոց է ձեռք տոնում վանքի իրաւունքը պաշտպանելու, այնուամենայնիւ գործը կատարողները լնդղիմանում են ու բռնի հեռացնում քանդուած պարիսպը վերականգնողներին։

Արդեօք այդ գործի հեղինակները մի բոլէ իրենց հաշիւ տալիս են, որ ժողովրդին անիշխանութեան, բռնազրաւման են վարժեցնում։ որ այսօր վանքի հետ այդպէս վարւողը վաղն էլ մի ուրիշ հիմնարկութեան, անպամ մի անհատի հետ կարող է վարուել։

Չէ՞ որ այդ զէնքը երկսայրի է և վաղը կարող է հէնց այդ զէնքը տուողի իրեն դէմ դառնալ, Յետոյ. պատասխանատուն նվ է։ Գիտե՞ն այդ «ազատամիտները» որ օրինակը վարակիչ է. դայթակղութիւնը խիստ մեծ ու վատ հետեանքներով լի։

Թողնենք խնդրի հասարակական կողմը, առնենք պատմականը, վանքի այն պարտէզը, որի պարիսպը քանդել են աննման «սօցալիստները», մինչև 1868 թիւը մի ամայի վայր է եղել դարձեալ էջմիածնին պատկ սնող. այդ տարին Եզիտառսից դալիս է Մկրտիչ բէյ Ռէխզեանը Մ. Աթոռ և տեսնելով վանքին կից այդ տեղը խնդրում է Գէորգ Դ. կաթուղիկոսից արտօնել իրեն ծառեր տնկել, պարսպապատել և վանքին թողնել։ Արտօնութիւնն ստանալուց յետոյ ժամանակի Սինօղի անդամ և Պահական Կառավարութեան նախագահ Գրիգոր արքեպ. Սագինեանի հետ պարտէզը պատրաստում են և քարէ սիւներով, վայտերով շրջափակում և տալիս վանքին։

1880-ական թուականների սկզբում մի քանի վաղաբշապատցիք խնդրում են թոյլ տալ այդ պարտէզում մի հիւրանոց պահել և վճարել որոշ կապալազին։

Խնդիրը յարգւում է և վանքից կապալով վերցնում են մի քանի տարով։ Ապա միաբանութիւնը տեսնելով, որ վանքի միաբանների ընակարանին կից մի այդպիսի զուարձատեղի անյարմար է պահելը, յետ են վերցնում, տունը քանդում ու քարէ պարսպով շրջափակում։ Այսուհետեւ միաբանութիւնը ինքը օգտուել է, պարտէզից։ Մ. Աթոռի ներկայ մատենադարանի շենքը շինուելուց յետոյ պարտէզը միանում է այդ շենքին։ Պարտէզի և վանքի ըակի մէջ եղած հողէ պարխապը որոշուած էր վաղուց վերցնել ու նախկին միաբանական, այժմ արդէն քանդուած խուցերի տեղ միաբանութեան նոր շենք կառուցանել, որովհետեւ միաբանական այժմեան ընակարանը բաւականութիւն չէ տալիս, Բնական է, որ միաբանական շենքի առաջը հասարակաց զրուավայր զուարձատեղի ունենալը աննպատակայարմար է ըստ ամենայնի։

Այդ էլ թողնենք, չէ որ այդ քանդողները պէտք է գիտենային, որ Վաղարշապատի հասարակութեան համար վանքը Սինօդի օրագրական վճռով այլ զրուատեղի է յատկացրել։ Ինչու խուսափում են այդ զրուատեղուց։ Ինչու հենց պատրաստի զրուավայր են ուզում զրաւել։

Բայց ամենից զլխաւորը խնդրի մի այլ կողմն է։ Յայտնի է իրեն մի համատարած իրողութիւն-ճշմարտութիւն, որ հայ եկեղեցիների ու վանքերի սեփականութիւնը նամազգային սեփականութիւն է և ոչ թէ, ինչպէս ոռւսաց եկեղեցում է, այս ու այն վանքինն է, որ հայ եկեղեցու կալուածների տէրը հայ ամրող աղջն է և ոչ թէ այս ու այն համայնքը։ Զէ՞ որ 1903 թուի կալուածների գրաւման դէմ ամենուր ցըռուած հայութիւնը ժամանակի բոնապետութեան դէմ խստագոյնս բողոքեց հենց այդ սկզբունքով։

Հետեապէս հայ վանքի, եկեղեցու որևէ թէկուղ ամենաննշան կալուածի նկատմամբ տնօրինութիւն կարող է անել միայն և եթ համազգային ժողովը և ոչ թէ այս ու այն համայնքը։

Երբէք ոչ տաճկահայր, ոչ պարսկահայր, ոչ Երևանի կամ Ղարաբաղի կամ այլ տեղի հայը չի կարող անկախ իր

մօտ եղող եկեղեցու վանքի կալուածը գրաւել։ Այդ կլինիք բռնազրաւում և հայ ժողովրդի ամբողջութեան իրաւանց խախտում որի դէմ իրրե հայ մարդ խստագոյնս բողոքում ենք, մեզ հետ և ողջ միաբանութիւնը և բոլոր այն հայերը, որոնք ազգի իրաւունքի և ոչ թէ այս ու այն անհատի համայնքի օգուտը, շահը ի նկատի ունեն։

Ահա խնդրի ո՞ր կողմը աւելի էական է և որի վրայ հրաւիրում ենք հայ ժողովրդի խելահաս ու բանիմաց մասի ուշազրութիւնը և պահանջում, որ ձայն բարձրացնեն ընդհանրապէս նման դործելակերպ ունեցողների դէմ։

Թող շկարծուի, թէ կաշուի հարց է մէջ տեղը, թէ անձնական շահի խնդիր է ուստի և ձայն ենք հանում, թող մի անգամ ընդմիշտ լաւ իմանան դրանք, որ միաբանութեան իւրաքանչիւր անդամ այնքան ոյժ ունի, որ առնուազն իր օրական հացը իր աշխատանքով ձեռք բերել կարող է, եթէ ոչ աւելին։

Բայց այստեղ համազդային իրաւունքի խնդիր է, և միաբանութիւնը, որ կոչուած է ծառայելու Մ. Աթոռին, չի կարող անտարբեր նայել, թէ ինչպէս ազգային իրաւունքները խախտում են ինչ որ ինքնակոչներ, չի կարող բոլոր ուժով չբողոքել այդ տղեղ և անարդար արարքի դէմ։ Այսօր նա է պատասխանտու ժողովրդի առաջ և եթէ վաղը, միւս օրը ազգային ժողովը հաշիւ պահանջէ ազգային սեփականութեան պաշտպանութեան միաբանութիւնը պէտք է հրապարակ գայ։

Խնդիրն ըստ Երևոյթին փոքր է և պատահական բայց իրօք սկզբունքային նշանակութիւն ունի և մանաւանդ թէ կարող է վատ օրինակ լինել և շատ շատերին զայթակղեցնել, աւելի տղեղ արարքների պատճառ դառնալ։

Հայ ժողովուրդը պէտք է սանձահարէ նման ինքնակոչներին ու սրանց ղեկավարներին, քանի որ նա իր իրաւունքը պաշտպանել է միշտ ու այսուհետեւ աւելի ևս կալաշտպանէ։

Անիշխանական արարքը միշտ է դատապարտելի ուր, որտեղ և ում կողմից էլ նա երեան գայ։